



## **Ավտոմատ վճարովի ավտոկանգառ /տեխ.բնութագիր/**

Համակարգը նախատեսված է վճարովի ավտոկայանման ավտոմատացման համար, ինչպես բաց, այնպես էլ փակ ` ստորգետնյա և վերգետնյա տարածքներում, որոնք ունեն մեկ կամ ավելի մուտքեր և ելքեր:

Բացի մեկանգամյա վճարմամբ կայանման` համակարգը նախատեսում է ծառայողական քարտերով կայանում` կոլեկտիվի անդամների համար (բաժանորդի պլաստիկ քարտի միջոցով):

Համակարգի հուսալիության ապահովման համար օգտագործվել են բարձրորակ և տեխնիկապես հագեցած սարքավորումներ:

### **Համակարգի առանձնահատկությունները**

- Վճարում մեկանգամյա կտրոններով կամ անցում բաժանորդի պլաստիկ քարտի միջոցով;
- Պաշտպանվածություն տրանսպորտային միջոցի անօրինական անցումից;
- Եղանակային պայմաններին սարքավորումների բարձր հարմարվողականություն
- Լուսային ազդանշան ավտոկայանման տեղի առկայության մասին

### **Ավտոմատ ավտոկանգառի աշխատանքի սկզբունքները**

Երբ մեքենան մոտենում է ավտոկանգառի մուտքին, տպագրող ավտոմատի միջոցով ստանում է մեկանգամյա կայանման կտրոն` շտրիխ-կոդով, կամ կարդացող սարքին է մոտեցնում նախապես գրանցված պլաստիկ քարտը: Համակարգը ավտոմատ ստուգում է քարտի իսկությունը, գործողության ժամկետը և մեքենայի առկայության տվիչի միջոցով ֆիքսվում է ավտոմեքենան: Եթե լուսային ազդանշանը ցույց է տալիս ավտոկանգառում ազատ կայանատեղի առկայություն, և ավտոկայանման արգելափակոցի դիմաց չկա արգելք /մեքենա/ ` ավտոմատացված համակարգի միջոցով բացվում է արգելափակոցը և մեքենան մուտք է գործում ավտոկայանատեղի: Արգելափակոցի աշխատանքը կարգավորվում է մեքենայի առկայության տվիչների միջոցով, որոնք տեղադրվում են արգելափակոցներից առաջ և հետո` ծածկույթի տակ:

Ավտոկայանատեղից դուրս գալուց առաջ, ելքի մոտ, վարորդը հերթապահ գանձապահին է ներկայացնում կայանման կտրոնը, հաշվարկվում է կայանման դիմաց գանձվող գումարի չափը, գումարը ստանալուց հետո գանձապահը բացում է արգելափակոցը և մեքենան դուրս է գալիս տարածքից: Պլաստիկ քարտով մուտք գործած վարորդը կարդացող սարքին է մոտեցնում քարտը, համակարգը ավտոմատ բացում է արգելափակոցը:

Գործում է կայանման համար նախատեսված վճարների ճկուն համակարգ: